

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

«ՀԱՄԼԵՏԻ» ՄԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրապարակում և առաջաբան Շուշանիկ Նազարյանի

«Համլեթաճարսի» արժանահիշատակ խմբագիր-հրատարակիչ Սարգիս Փափազյանը իր հանդեսի էջերում (1862 թ.) տպագրելով «անմահ անվան տեր» Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», խոսելով Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանության և հրատարակության հույժ կարևորության մասին, գրում է. «Ով գիտե, դեռ որքան ուսումնասիր ազգայինը, ինչ թարգմանություններ ունին, և քաջալերութենե կամ միջոցներե զուրկ, իրենց գրությունները փոշիներու մեջ կփտտին ու ցեցակեր կըլլան... Շեքսպիրի պես հեղինակի մը թարգմանությունը մեղք եղած ըլլա պիտի անտիպ թողուլը»¹:

Իրոք «մեղք պիտի ըլլա» Շեքսպիրի երկերի անցյալում կատարված որևէ թարգմանության անտիպ թողնելը: Այս գիտակցության մղումով, ահա, մենք հայ շեքսպիրագետների ուշադրությանն ենք ներկայացնում «քաջալերութենե և միջոցներե զուրկ» մի հեղինակի անխոնջ աշխատանքի արդյունքը: Այս թարգմանության հեղինակը XIX դարի նշանավոր գործիչ, գրող, մանկավարժ և հրատարակիչ Գարրիել Պատկանյանն է (Ռաֆայել Պատկանյանի հայրը, Միքայել Նալբանդյանի ուսուցիչը):

Մի քանի խոսք նրա մասին:

Գ. Պատկանյանը թեև իր կյանքն անց է կացրել հալածանքների ու պայքարի մեջ, բայց և նշանավոր դեր է կատարել XIX դարի, հատկապես 30—60-ական թվականներին, հայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի առաջընթաց շարժման մեջ:

Քաջատեղյակ լինելով եվրոպական ու արևելյան ազգերի, ինչպես և ուսս ժողովրդի պատմությանը, հաղորդակից լինելով նրանց ազգային մշակույթին, Գ. Պատկանյանը 1830-ական թվականներից սկսած իր ամբողջ ուժերը տրամադրում է հայ ժողովրդի ազգային լուսավորության ու կրթության գործին և հենց այդ պատճառով, իր գործունեության առաջին քայլերից, ուժեղ պայքարի մեջ մտնում ամենահետադեմ գործիչների դեմ:

Գ. Պատկանյանը թողել է վիթխարի գրական ժառանգություն՝ վեպ, վիպակ, պատմվածք, դրամա, պոեմ, քնարական բանաստեղծություն, ինչպես նաև բազմահատոր պատմական ստեղծագործություններ, հրապարակախոսական երկեր ու թարգմանություններ: 1840—60-ական թթ., օգտվելով «Կովկաս», «Արարատ» և «Հյուսիս» շաբաթաթերթերին մասնակցելու հնարավորությունից, նա հանդես է եկել հրապարակախոսական, բանասիրական բազմաթիվ հոդվածներով և ակնարկներով, որոնցով արձագանքել է հայ ժամանակակից կյանքի հետ կապված բազմազան հարցերի (աշխարհաբար և գրաբար լեզվի պայքար, գրականություն, դպրոց, ուսուցչություն, մանկավարժություն, թատրոն, տպագրություն և ազգային առաջադեմության հետ կապված այլ խնդիրներ): Գ. Պատկանյանը նախաձեռնողի է եղել հայ ընթերցողներին հաղորդակից անելու ուրիշ ժողովուրդների գիտության

¹ «Համլեթաճարս», 1862, № 11, հունիս 1, էջ 90:

եմպաճումներին: Նրա արթնվում մեկը հանդիպում ենք բազմաթիվ ձևադիր տեսակներին, որոնց մեջ կան մի շարք ժողովուրդների հին և նոր պատմությունների թերի կամ ավարտված շարադրանքներ (անախի աշխարհ՝ Հունաստան, Հռոմ, հեթանոսական շրջանի ազգերի պատմություն, նրանց կառավարման ձևերի, կրոնների մասին, արևելյան ազգերի՝ չինացիների, հնդկների պատմություն, նրանց բարքերը, նոր ժամանակների պատմություն, ծովային ճանապարհորդություններ զեպի Արևելյան Հնդկաստան, Ամերիկայի հայտնաբերում, Ֆրանսիական հեղափոխության մասին և այլն):

Գ. Պատկանյանը թողել է բազմաթիվ թարգմանություններ: Փառն տարեկան հասակից նա զբաղվել է թարգմանական աշխատանքով: Թարգմանել է XIX դարի պատմարան, սոցիոլոգ Հենրի Թոմսոն Բոկլի «Փաղարակրթության պատմություն Անգլիո» աշխատությունը, ուսական օրենքներ, պիեդոնական կանոններ, հրովարտական, թարգմանել է նաև մի անհայտ հեղինակի «Զբաղույցների փրկության մեծագործությունը», «Աղբյուրանյութ Մակեդոնացու պատմությունը», թարգմանել է Հյուգոյից, Շերպիլիցի և այլն:

«Համլետի» խնդրո առարկա թարգմանության մեջ հասած օրինակը, դժբախտաբար, խիստ պակասավոր է: Սա պարունակում է ողբերգության առաջին դործողության Ա, Բ, Գ տեսարանները (Գ-ն թերի): Սակայն, անկասկած, հեղինակը ժամանակին թարգմանել է ամբողջը, որ մեզ չի հասել: Մեր պրպտումները՝ թարգմանության նախնական, սևագիր օրինակը գտնելու նպատակով, ապարդյուն անցան: Գ. Պատկանյանի վկայությամբ, 1853 թվականին, իր ձեռնարկության ժամանակ, բռնադրավում է նրա արթնվել և այլևս չի վերադարձվում: Թերևս այդ արթնվել բազմաթիվ դործերի մեջ եղել է նաև «Համլետի» թարգմանության սևագրությունը: մեր ձեռքի տակ է Պատկանյանի մաքրագիր օրինակը, իսկ նա, իր սովորության համաձայն, մաքրագրում և սրբագրում էր ավարտած գործերը միայն:

Թեև «Համլետի» թարգմանության ստույգ ժամանակը մեզ հայտնի չէ, սակայն կան հանգամանքներ, որոնք օգնում են որոշելու այդ թարգմանության մոտավոր ժամանակը:

Գ. Պատկանյանը «Համլետի» թարգմանությունը կառարած պիտի լինի ոչ ուշ քան մինչև 1864 թվականը՝ բանտում, արսորում (1853—1863 թթ. միջոցում) կամ մինչև այդ՝ նոր-նախիջեանում կամ Բիֆլիսում 1830—1853 թվականներին:

Ինչպես նկատեցինք, Գ. Պատկանյանի զրական-հասարակական դործունեության բուռն շրջանը բնորոշում է 1830—60-ական թվականները: Մեքության տարիներին նա նոր բան չի ավելացնում իր գործերին, այլ սրբագրում է բանտում և արսորում գրած աշխատություններն ու թարգմանությունները:

1863 թ. արսորավայրում (Վլատկա) Գ. Պատկանյանին այցելում է նրա աշակերտ Ավետիք Խաղեզյանը, որին զարմանք է պատճառում ձեռագրերի այն բեռը, որ տեսնում է ուսուցչի աշխատանքայնում:

1770-ական թվականներին, իր ձեռքի տակ արդեն ունենալով բազմաթիվ նշութեր, Գ. Պատկանյանը ձեռնամուխ է լինում նոր-նախիջեանի եռահատոր հիշատակարան-պատմությանը և ավարտում է 1779 թվականին: Դրան հաջորդող տարիներին նա շարադրում է իր ստվարածալալ ինքնակենսագրությունը, որն ավարտում է 1882 թվականին: Այնուհետև Գ. Պատկանյանը, կիսով չափ կորցրած լինելով իր տեսողությունը, մտավոր աշխատանքով չի զբաղվում:

«Համլետի» թարգմանության փաստը առաջին հերթին պատճառաբանվում է այն մեն հետաքրքրությունով, որ Գ. Պատկանյանը ունեցել է թատրոնի նկատմամբ՝ դեռևս երիտա-

սարդուիցան օրերից: Քսան-քսանհինգամյա 'Ի. Պատկանյանը, երբ Նոր-Նախիջևանում զբաղվում էր ուսուցչությամբ, դասավանդելիք նյութը, հաճախ, բաժանում էր դերերի, որպեսզի աշակերտները «թատերախաղով ներկայացնեն» յուրացված դասը: Հայտնի է նաև, որ 1830-ական թվականներին Նաղարյան ճեմարանի նոր-նախիջևանցի աշակերտները՝ Սարգիս Տիգրանյան և այլք, ամռան ամիսներին վերադառնալով հայրենիք, ներկայացումներ էին կազմակերպում այնտեղ: Թեև մեր ձեռքի տակ չունենք որոշակի փաստեր, սակայն, անկասկած, Գ. Պատկանյանը՝ Նոր-Նախիջևանի այդ ամենաազդեցիկ անձնավորությունը, չէր կարող որևէ մասնակցություն հանդես չբերել այդ ներկայացումների կազմակերպման գործին: Իր որդու՝ Ռաֆայել Պատկանյանի վկայությամբ, Գ. Պատկանյանը «նախիջևանի համար, ամբողջ 30 տարի, մի տեսակ բարոյական արեգակ էր. որ յուր շուրջը սփռում էր լույս և ճշմարտություն»¹:

Մեկ հասել են Գ. Պատկանյանի դրամատիկական որոշ երկերի (անթվակիր) սևագիր օրինակներ, որոնք, թերևս, հենց այդ տարիներին են գրվել:

Պահպանվում է թատրոնի մասին Գ. Պատկանյանի հետադա տարիներին գրած մի կարևոր հոդվածի մատուցը, որի բովանդակությունից երևում է, որ հոդվածը գրված է 1859 թվականին՝ թիֆլիսահայ թատրոնի անդրանիկ ներկայացման առթիվ: Այդտեղ Գ. Պատկանյանը ազգային լուսավորության էական գործոններից մեկը՝ «Հայերու առաջ շարժիլու գլխավոր լծակը», համարում է թատրոնը, պաշտպանում է ռեալիստական թատրոն ստեղծելու գաղափարը և խրախուսում է այդ գործի ջատագովներին:

«Մեր դրամատիկությունը այն չէ,— գրում է Գ. Պատկանյանը,— որ ներբողական ճանքի գրեթե, կամ միաբանության համար, կամ թիֆլիզեցվոց: Այս երկուսի զովեստն էլ, վարձն էլ իրենց մեջն են պարունակում: Մենք միայն այս պիտի ասենք, որ ուրեմն, եթե այլ հայաբնակ քաղաքներու ժողովուրդներն էլ կամենան, կարող են իրենց օգտի համար այդպիսի ազգասիրական հանդեսներու մեջ ձգնիլ և փառավորվիլ: Բայց միշտ փառքը ու պատիվը նրանցն է, ով որ առաջ ճանապարհ կբանա: Ուրեմն, փառք թիֆլիզաբնակ հայերուն և պարձանք նոցա ազգասիրության, որ ազգային լուսավորության ասպարհումը այս առաջին քայլափոխը արին: Թեպետ առաջին քայլն է, սակայն մեծ քայլափոխ է: Թատրոն ունենալը փոքր գործ չէ: Ի՞նչ կա մարդու բարի կենցաղավարության հարկավոր, որ այնտեղ չիմանա ու չսովորի: Ինչ, որ ո՛չ վարժապետը է կարող վարժատան մեջ ավանդիլ, և ո՛չ վարդապետը եկեղեցու բնումը, այն դերասանը կարող է ասել թատրոնի տեսարանումը»²:

Պատկանյանի աշխատանքի այս հատվածից երևում է, որ նա քաջաձանձի է ուսթ թատրոնի պատմությանը: Խոսում է ռուս թատրոնի կազմավորման մասին, քննադատում է Ա. Ս. Մատվեևի թատրոնը, համարելով այն հասարակությունից կտրված, արբունական նեղ շրջաններին սպասարկող թատրոն, և ռուսական ազգային թատրոնի հիմնադիր է համարում Ֆ. Գ. Վոլկովին:

Հայ թատրոն ստեղծելու գաղափարով խանդավառված Գ. Պատկանյանը թերևս հենց այս շրջանում է թարգմանել «Համլետը»:

¹ Ի. Պատկանյան, նրկասիրությունը, Ռոստով, 1904, էջ 4:

² Գրականության և արվեստի թանգարան, Պատկանյանների ֆոնդ, վավ. № 6, էջ 1:

Մի անուղղակի խնդիր էր, որը կարող է հաստատել մեր վերահիշյալ կարծիքը:

Գ. Պատկանյանը «Համլիտ» թարգմանել է 1850—60-ական թվականներին նոր ստեղծված աշխարհագրամիտ՝ զբոսական այն Հայերենով, որով գրում էին արևելյան հայ գործիչները: Այդ թարգմանությունը իր լեզվական մակարդակով՝ բառապաշարով, ոճով, շարահյուսական, քերականական առանձնահատկություններով համապատասխանում է Գ. Պատկանյանի 1850—60-ական թվականներին երկերի լեզվին:

«Համլիտ» ստորև ներկայացվող թարգմանության լեզուն, ինչպես կնկատի ընթերցողը, հաստի չէ. կան անկանոն նախադասություններ, բառերի քերականորեն շեղումներով հատկացություններ, զոյականների, բայերի, դերանունների խառն՝ զրարար և աշխարհարար ձևերի օգտագործման դեպքեր, բարբառային տարրեր և այլն: Սա ցույց է տալիս, որ թարգմանիչը չի հղկել, մշակել իր աշխատանքը:

Մի քանի խոսք այն մասին, թե ինչ տեղ ունի Գ. Պատկանյանի սույն թարգմանությունը «Համլիտ» հայերեն թարգմանության պատմության մեջ:

Բազմաթիվատակ բանասեր Վ. Թերզյանը իր «Երեսպիրը հայերեն» գրքում, ի մի բերելով հայ գրականության մեջ Երեսպիրի մասին գիտելիքները XVII դարի վերջերից հղած հիշատակություններն ու հայացքները, մեջբերումներ անելով Երեսպիրի երկերի առանձին հատվածների՝ XVIII դարից ի վեր հղած հայերեն թարգմանություններից և այլն, Երեսպիրի երկերի հայերեն թարգմանության բուն պատմությունը բաժանում է երեք շրջանի: «Առաջին երկու շրջանները,— գրում է նա,— կարելի է անվանել նախամասնական և մասնական»¹: Գ. Պատկանյանի թարգմանությունը պետք է դասել նախամասնականության թարգմանությունների շարքը:

Ինչպես հայտնի է, մինչև Մասնականի թարգմանությունը «Համլիտ» հայերեն բոլոր թարգմանությունները հղել են արձակ. Գ. Պատկանյանի թարգմանությունը նույնպես արձակ է:

«Համլիտ» առաջին թարգմանիչը՝ Ա. Տեսեյանը թարգմանել է արևմտահայերեն: Գ. Պատկանյանը թարգմանել է արևելահայերեն: Այսպիսով, եթե նույնիսկ Գ. Պատկանյանի թարգմանությունը դիտենք որպես երկրորդ թարգմանություն (Տեսեյանից հետո), ապա արևելահայ լեզվով առաջին անգամ «Համլիտ» թարգմանելու պատիվը պատկանում է Գ. Պատկանյանին:

Վ. Թերզյանը, Ա. Տեսեյանի թարգմանությունից մեջբերումներ անելով, գրում է. «Այժմ երբ կարդում ենք մեզանից մոտ մեկ դար առաջ թարգմանված «Համլիտ» այս հատվածները, կարծես յուսմ ենք մեր օրերում զրի առնված պարզ և հասկանալի արևմտահայերենը, լիովին հասկանալի բոլոր հայերի համար: Անկասկած,— շարունակում է նա,— Տեսեյանի թարգմանությունը զեղծ չէ անհշտություններից... սակայն ո՞ր թարգմանությունն է անթերի: Այսօր «Համլիտ» առաջին թարգմանությունը պատմական և կուլտուրական մեծ նշանակություն ունի մեզ համար»²:

Գ. Պատկանյանը կատարել է նույն պատմական դերը, ինչ Վ. Թերզյանը, իրավամբ, վերագրում է Ա. Տեսեյանին:

«Համլիտ» Ա. Տեսեյանի և Գ. Պատկանյանի թարգմանությունները, թեև որպես նոր զարգացող աշխարհարար (արևելահայ և արևմտահայ) թարգմանություններ, հավասար

¹ Վ. Թերզյան, Երեսպիրը հայերեն, Երևան, 1956, էջ 11:

² Նույն տեղ, էջ 43:

բաշափ անհարթ են, սակայն անշուշտ երկու թարգմանիչն էլ կարողացել են Շեքսպիրի համամարդկային հույզն ու զազափարը հաղորդել ընթերցողին: Գ. Պատկանյանը կարողացել է, «անգլիացոց երևելի քերթողի մարդկային սրտի ամեն մանր-մունր ծալքերը քրքրելով» արվեստը հասկանալ և բացահայտել՝ նոր ծնունդ առած գրական աշխարհաբարով: Սա իրոք պատմական նշանակալից երևույթ է:

«Համլետի» հայ առաջին թարգմանությունները համեմատելու համար բերում ենք հատված Համլետի առաջին մենախոսությունից:

Ա. Տեղեյան

«Ո՛հ, այս պիտու հաստատուն մարմնույս միսն ալ սառնամանյաց պիս պիտի հալի երթաւ և ինքնիրենը վար պիտի ցողն. եթէ ո՛չ, հալիտենսկանությունը, յուր օրհնքը՝ անձնասպանությունը դեմ կարգն. ո՛հ, Աստված իմ, ո՛հ, Աստված իմ, աս աշխարհիս բոլոր սովորական վայելումներն որ ինտոր ծանծարալի, հնացած, անհամ և անօգուտ կ'երևան ինձ: Ափսոս, ափսոս, վայրենի դալարոյք լեցուն պարտեզ մ'է, որոնք անշնչակ մնալով ինքնիրեն մինչև սերմ թափելու ժամանակնուն կը հասնին. բնության մեջ ամեն բան կ'աճի ու կը բեղմնավորի և բուրբուլիս կը լեցնեն դան:

Այսքան ալ պիտ երթա եղբոր:

Հազիվ թէ երկու ամիս եղավ, չէ՛ այնքան ալ չէ, Դեռ երկուք չի կա՛ այնպիս շնաշխարհիկ թագավորին մեռնիլը, որ հիմակ գիտես թէ ներկային՝ քովը՝ երգիծանաց մեջ Հյուպերիոն (Ապոլոն) մ'եղեր է, մորս այնքան սիրելին, որ երկնից հողմերուն ներքև չէր ուղեր բնավ, որ անոր երեսին վրա սաստկութեամբ այցելություն ընեն: Երկի՛նք, երկի՛ր, հիշե՛մ աս բաները, մայրս հացկատակություն կ'ընն եղեր իրեն, որպես թէ իր կերած հացին համար ունեցած խորժակին հորդությունը. իր կերածովն ալ ավելի բազմապատկած բլլար, այսու ամենայնիմ, դեռ ամիս մ'անցավ-չանցավ—ո՛հ, թո՛ղ ալ չի մտածեմ այս բաները.—Անցավորություն, կի՛ն է անունը...»¹:

Գ. Պատկանյան

«Ա՛խ, եթէ իմ այսքան ամուր մարմինը կարողանար հալվիլ ու ցոլ դառնալ: Ա՛խ, եթէ նախահալիտանը անձնասպանության դեմ արգելք դրած չլիներ: Աստված, աստված, ինչպե՛ս տօժույն և արհամարհ, ինչպե՛ս սնտոի են երևում ինձ կյանքի վայելչությունները: Ինչպե՛ս խղճալի է այս աշխարհը: Մոլախոտայլ հին պարտեզ, ուր որ միայն ցախ ու անպիտան խոտեր են բուսում: Կարելի՞ էր, որ մինչև այս տեղ հասնեի...: Դեռես երկու ամիս է, որ մեռավ: Ի՛նչ եմ ասում, դեռես երկու ամիս էլ չկա:

Այնպիսի մեծ միապետ, որ այնժամ թագավորի հետ համեմատելով՝ էր այժամարդի առջև Հիփերիոն, որ այնքան քնքույշ սիրով սիրում էր յուր զուգակցին..., քամիին արգելումն էր տալիս, որ նորա երեսին անզգուշարար չը փչն... Երկինք, գետին, ա՛խ, ինչի՞ եմ ես միտքս բերում. նա էլ նրան ինչպե՛ս սերտ էր մոտենում, որպես թէ կերակուրը, ավելի ուժգին էր քաղցը զորացնում...: Եվ ի՛նչ: Հազիվ թէ անցավ մեկ ամիս միայն...: Հեթի՛ք է... էլ չըհիշե՛նք, միտքերս չըբերե՛նք: Անհաստատություն, քո անունը կի՛ն է: Դեռ մեկ ամիս: Դեռ այն ոտնամանները մաշված չեն, որոնցմով որ զնում էր նա իմ հորս դադարի հետեին՝ արտասուքի մեջ՝ նիստիսի նման...: Եվ այս կինը...: Ո՛վ երկինք: Անմիտ զազալքը այնքան շուտ չէր մոտենար յուր կսկիծը: Իսկ աս արդեն ամուսնացած է. իմ հոր եղբոր կի՛նն է. յուր մեռած մարդու եղբո՞րը, որ այնքան նման է նրան, որքան որ ես նման եմ Հեթրոտիսին: Միկ ամսումը: Ախր՛ը, խո դեռ չե՛ն կորսցված նորա արտոսա-

¹ «Դիմախ», 1862, № 2, էջ 13:

թոր աչքերու մեջ սար դրած (կեղծուպետիք) արտասուների հետքը. նա արգեն պսակված է՝
Որինադասեց, շատալ Այսպես հոմարտիկամբ և մտապուր ճեպել զնալի աղագաղծության
անկողի՝ նր. լավ բան չէ. այստեղ հաջողված չի լինիր Փշղվի՛ր, սիրտու Ինձ մնում է լույս»¹։

Ա. Տեոտեյանը «Համլեոտի» թարգմանությունը կատարել է անգլերենից, Քե ԽՆՆ լեզ-
վից է թարգմանել Գ. Պատկանյանը, հայանի չէ, և մենք վստահ չենք կարող ասել։ Նա
քաջ գիտեր ոտաներն, գիտեր նաև օտար լեզուներ, բայց թե ԽՆՆ լեզվից է թարգմանել է
ԽՆՆ աղբյուր է հիմք հանդիսացել «Համլեոտի» այս թարգմանության համար՝ թողնում ենք
լուծելու մեր շեքսպիրադեաներին։

Շեքսպիրի ծննդյան 300-ամյակի առթիվ Լոնդոնում Անգլո-հայկական դրական կո-
միտեի կողմից կազմակերպված միտինգ-հանդեսում (1916 թ.) «Հայկական դատի շեքս-
պիստական» լուրջ Որտեսը իր բացման խոսքում ասել է. «Հայաստանը մեծապես արժանի
է մասնակցելու Շեքսպիրի 300-ամյակին, քանի որ եկեղեցական և պատմական ոտանա-
վոր և արձակ հարուստ դրականություն ունի, զեռ հեռավոր անցյալից սկսած՝ երկար դա-
րերի ընթացքում, երբ նեղուցիներից այն կողմը դրականություն դուրսբերող շուններ, դրա-
կանությունն իր ծագված երիտասարդությունն էր ապրում Հայաստանում։ Բանաստեղ-
ծական ավյունը երբեք չցամաքեց այնտեղ և իր բազմաթիվ բանաստեղծներն աշուր էլ
ապրում են հայ ժողովրդի հոգու մեջ։ Չկա մի այլ երկիր և այլ ժողովուրդ, որ այնքան
շատ ոգրերգական և հուզիչ նյութ մատակարարած լինի բանաստեղծության համար, որ-
քան Հայաստանը։ Նրա պատմությունը դարերի ընթացքում եղել է հայրանքի և վառանգի,
անընդհատ դիմադրության պատմություն»²։

Այսպիսի մի ժողովուրդ, որի պատմությունը թեև եղել է հալածանքների և անընդհատ
դիմադրության պատմություն, բայց որի երակներում երբեք չի ցամաքել բանաստեղծա-
կան ավյունը՝ կարող էր Շեքսպիրի մարդկային ժառանգությունը յուրաքանչյուր ժողովուրդ-
ների առաջին շարքում լինել։

«Համլեոտի» Գ. Պատկանյանի թարգմանությունը, այդ երևույթի մի նոր ապացույցն է՝

¹ Մատենադարան, Զանգյան հեղինակների արխիվ, թղթ. № 62, վավ. № 15, էջ 7ա։

² «Շոքիդոն», 1916, № 125, հունիսի 7։

³ Այստեղ մենք պատշաճ ենք համարում բանասիրական որոշ լրացում անել Ա. Տե-
ոտեյանի թարգմանության վերաբերյալ։ Հայ շեքսպիրադեաներին մատչելի է եղել նրա
թարգմանության առաջին դործողության տեսարանից մի հատված միայն։ Արժանահիշա-
տակ Վ. Քերդիրաշյանը ցավով է նշում, որ նրան չի հաջողվել գտնել «Դիմակ» հանդես
համարները, ուր տպագրված է դործը։ Բանասերը գտել է «Դիմակի» համարներից միայն
երկուսը և հայտնել իր տարակուսանքը. «...պետք է ենթադրել, որ սկիզբը տպագրված
էր առաջին համարում, իսկ շարունակությունը՝ Այլ բոլորը մեծում էր կրկին անհայտու-
թյան մեջ։ Արդյուր «Համլեոտի» ո՞ր մասն է տպագրված, մինչև ո՞ր դործողությունն ու տե-
սարանը հետագա համարներում» (Վ. Քերդիրաշյան, Շեքսպիրը հայերեն, էջ 45—46)։
Մինչդեռ, բարեբախտաբար, «Դիմակի» ենթագրվող օրինակները (1862 թ.) (երկու հա-
վաքածո) վաղուց ի վեր պահպանվում են Մատենադարանում։ Ինչ-ինչ թյուրիմացությամբ
դրանք անմատչելի են մնացել Վ. Քերդիրաշյանին։ Այսպիսով, Տեոտեյանի թարգմանության
հետ կապված հարցերը ստանում են իրենց լուծումը։ Մեզ մնում է ավելացնել, որ «Դի-

Հ Ա Մ Լ Ե Թ

Արքայորդի Դանիմարբայի
Ողբերգություն հնգյակ արկածքով

Վ. Շաֆեսփիռա

<Թարգմանեց՝ Գաբրիել Պատկանյան>

Անցքերու մեջ հաղորդակից անձինք

Կլավտիրոս—արքա Դանիո
Համլեթ—որդի հանգուցյալ արքայի
և եղբորորդի ալժմյան թագավորի
Պոլոնիոս—մեծ սենեկապետ
Ուլրատիրոս—բարեկամ Համլեթի
Հանրա—որդի Պոլոնիոսի
Վոլտիմանդ
Րոդենկրանց
Կոռուռնելիոս
Հենդերշտերն
Ուլրիկ
Դրանիկ
Քահանա
Մարկելլոս
Բեռնարդոս

դրանիկը:

սաշտոնատարը

Ֆրանչիսկոս—գինվոր
Գեսպան
Ուրվականն հոր Համլեթա
Առաջին գերեզմանափոր
Երկրորդ գերեզմանափոր
Ֆորտինբրաս—արքայորդին նոր-
վեգիո
Սեպուհ նորվեգյան բանակի
Հոենարդոս — սպասավոր Պոլո-
նիոսի
Առաջին դերասան
Երկրորդ դերասան
Դերասանուհի
Հերդրուդա — թագուհի Դանիո,
մայր Համլեթի, կին Կլավտիրոսի
Ուփելիա (Գորոզիս)—գուստր Պո-
լոնիոսի:

Դրանիկը, տիկնայք, սեպուհը, գինվորը, դերասանը,
քահանայք, նավագը, դեսպանը, սպասավորը և այլն:

մակի» տեսրակներում տպագրված են «Համլետի» թարգմանության Ա գործողությունը՝
(Ա, Բ, Գ, Դ, Ե տեսարաններով) և Բ գործողության Ա տեսարանը (Թերի):

Մատենադարանում պահպանվող «Դիմակ» հանդեսի երկու հավաքածոն էլ վերջանում
են № 7-ով, որը, ըստ երևույթին, հանդեսի վերջին համարն է: «Դիմակը» երկշարաթի-
թերթ է և լույս է տեսել յուրաքանչյուր ամսվա 1-ին և 15-ին. հետևաբար օգոստոսի 19-ի
համար չէր կարող ունենալ: (Վ. Թերզիբաշյանի մոտ տպագրված 19-ը վրիպակ է): Մնում
է միայն մի չլուծված հարց. երկրորդ գործողության Ա տեսարանով է վերջանում «Համ-
լետի» Տեսության թարգմանությունը, թե ոչ:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

էլսինոր, Թագավորի բերդագարակի առջև Հողարլուր ճամկիբ կան։
 Տեսարանի առջևի կողմումը երևում է բերդագարակի պարիսպը աշ-
 տարակներով զարդարած. պարիսպի միջավայրումը կա բարձրավանդակ,
 որո վրա շինած է Հողարլուր ճամկիբը. դեպի Հողարլուր ճամկիբը տա-
 նում են երկու վերելքի ճանապարհներ. Պարսպի ետևի կողմումը երևում է
 թագավորի ապարանից վերնաճարի մասը՝ բուրգերով զարդարված և պա-
 տուհաններով լուսավորված։ Պաճապանները ման են գալիս պարսպի վրա
 առաջ ու ետ երթալով։ Գիշեր է, լուսին կա, բայց ամպերով սղոտած է,
 ու բամին փշում է։

Ֆրանչիսկոս պարսպի վրա պաճապան է։ Բեռնարդոս աշակողմյան
 սանդուխտեն վեր ելլելով դնում է նրա մոտ, որ նորա տեղը սկսի պաճ-
 պանություն անել։

Բեռնարդոս—Ո՞վ է։

Ֆրանչիսկոս—Ինքդ տուր ինձ պատասխան, ի՞նչ է նշանարանը (փարոլ) և
 անցանիշը (լողունկ)։

Բեռնարդոս—Կեցցե՛ արքա։

Ֆրանչիսկոս—Բեռնարդո՞ս։

Բեռնարդոս—Ինքն իսկ է։

Ֆրանչիսկոս—Պաշտոնիդ արի՞ ես։

Բեռնարդոս—Արդեն կես գիշեր է, լավ կանես, որ երթաս դեպի քո անկո-
 դինը, Ֆրանչիսկոս։

Ֆրանչիսկոս—Շնորհակալ ևմ ձեզմեն աչդ մասին. ցուրտ է և սիրտս սառ-
 տիկ նեղանում է։

Բեռնարդոս—Մեկ գժբախտություն խո չըկա՞։

Ֆրանչիսկոս—Մուկն էլ չէ խլրտել։

Բեռնարդոս—Ուրեմն, բարի գիշեր քեզ։ Եթե հանգիպիս իմ պաճապանու-
 թյան բնկերներին՝ Ուրատիոսին և Մարկելոսին շտապեցուր նրանց։

(Աշակողմյան սանդուխտեն վեր են ելլում Ուրատիոսը և Մարկելոսը)։

Ֆրանչիսկոս—Հորեն, կարծեմ, որ նրանք իրանք էլ են գալիս։

Կացեք։ Ո՞վ է աչդ եկողը։

Ուրատիոս—Հայրենյաց բարեկամներ։

Մարկելոս—Մեծին Դանիո թագավորի հպատակները։

Ֆրանչիսկոս—Ուրեմն, ձեզ գիշեր բարի խաղաղություն։

Մարկելլոս—Երթաս բարով, ընկեր, քո տեղ ո՞վ եկավ:

Ֆրանչիսկոս—Բեռնարդոսը, գիշեր բարի: (Գնում է ձախակողմյան սանդուխտեն):

Ովրատիոս—է՛, Բեռնարդո՛ս:

Բեռնարդոս—Այդ դո՞ւ ես, Ովրատիոս:

Ովրատիոս—Հա՛, մեքիշ:

Բեռնարդոս—Շատ ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ այստեղ, իմ հավատարիմ բարեկամ Ովրատիոս և իմ թանկագին Մարկելլոս:

Ովրատիոս—Ուրեմն ի՞նչ ելավ, այսօր էլ երեւցա՞վ ուրվականը:

Բեռնարդոս—Ես չտեսա:

Մարկելլոս—Ովրատիոսը ասում է՝ թե այդ միայն մեկ երեւակայության խաղ է և էլ կամենում հավատալ այն սոսկալի տեսիլը, որը որ մենք տեսանք այնտեղ երկու անգամ. այս պատճառով ես սրան էլ հրավիրեցի, որ այսօր մեզ հետ միասին պահապան կանգնի, որ եթե, ով գիտե, տեսիլը մյուս անգամ այս տեղաց անց կենա, նա ինքը կարողանա իսկապես իմանալ, ինչ որ մենք տեսել ենք, և խոսի երեւվութի հետ:

Ովրատիոս—Այդ բոլորը առասպելք են, ձեր ուրվականը չի գալ:

Բեռնարդոս—Մե քիչ ետ նստինք, և կրկին սկսինք քո փոքրահավատ ականջի վրա արշավել այն անցքերու պատմությամբ, ինչ որ մենք այն տեղումը տեսանք, հետզհետե, երկու գիշեր:

Ովրատիոս—Ինչ է՞ որ, նստինք ուրեմն ... Սկսիր Բեռնարդոս...:

Բեռնարդոս—Երեկ գիշեր, կես գիշերեն ետ, առաջին ժամին, երբ որ հորես այս աստղը, որ բեռնեն դեպի արեւմուտք է ցուում, յուր սովորական շրջանը ավարտեց ու կրկին եկավ այն տեղ, ուր որ այժմ փայլում է, ես ու Մարկելլոսը, երբ որ աշտարակումը զարկեց մեկ ժամը... (սովեր երեւցավ պարիսպի պատի վրա):

Մարկելլոս—Սո՛ւա, լսեցե՛ք, մտիկ արեք, հորեն էլի նա:

Բեռնարդոս—Ի՞նչ զարմանալի նմանություն ունի հանդուցյալ թագավորին:

Մարկելլոս—Ովրատիոս, դու խո ամեն ուսմունքը սովորել ես, խոսիր նրա հետ:

Բեռնարդոս—Ճշմարիտ է՞ ասածս. զարմանալի նմանություն չունի՞ հանդուցյալ թագավորին...: Տե՛ս:

Ովրատիոս—Հա՛, զարհուրելի նմանություն. ես պարզապես քարանում եմ զարմանքես և երկյուղես:

Քեռնաբոս—Կարծես թե նա այստեղ սպասում է, որ մեկը սկսի հետը խոսելու:

Մարկեկոս—Խոսի՛ր հետը, Ուրաախո՛ւս:

Ուրաախոս—(Ուրվականին) Ո՞վ ես դու, որ այս դարհուրելի միջոցումս առել ես վրեղ Գանիո հանգուցյալ թագավորի քաջամարտիկ և վեհափառ կերպարանը: Երգմեցուցանում եմ քեզ երկնքի անունով, որո՛ւր ինձ պատասխան:

Մարկեկոս—Նա բարկացած է:

Քեռնաբոս—Հեռանում է մեծափառ և ծանրաշարժ քայլերով (ստվերը անց է կենում պատի մոտեն դեպի ձախակողմ):

Մարկեկոս—Հեռացավ՝ մեկ մեկ պատասխան չտված:

Քեռնաբոս—Հապա, ի՞նչ եղավ, Ուրաախոս դողո՞ւմ ես, և երեսիդ գույնը փոխել է. ճշմարիտ չէ՞ր, որ սա երեսակալության սնոտի խաղերուն չէ նման ... ի՞նչ ես ասում, եղբայր:

Ուրաախոս—Երդում եմ անում երկինքով, որ ես բնավ հավատալու չի, եթե որ չլինեին աչքերս՝ անժխտելի և հավատարիմ վկա:

Մարկեկոս—Այնպես չէ՞ որ նման էր թագավորին:

Ուրաախոս—Ինչպես որ դու նման ես փնթդ քեզ: Իսկ և իսկ այն դրահն ունեւ հագին, երբ որ պատերազմեցավ նորվեգացո դեմ, և նույն ահարկու դեմքը, որ սաստիկ վիճարանություն ժամանակը դահուկի մեջ զարկեց Պոլոնիացուն և տեղն ի տեղը թողեց նրան սառույցի վրա մեռած ... Շատ զարմանալի է:

Մարկեկոս—Իսկ և իսկ այսպես, արդեն երկու անգամ էլի այս լոռիքյան ժամանակումը առաջել, անց է կացել մեր պահապան կանգնած տեղի առջեկն՝ զինվորի նման մեծափառ քայլերով:

Ուրաախոս—Չեմ իմանում թե ի՞նչ պիտի համարիմ, բայց իմ կարծիքով այս նախադուշակություն է տերություն շրջադարձի և զարհուրելի շփոթներու:

Մարկեկոս—Ինչեիցե նստինք, և ով որ ձեզմեն իմանում է, թող ինձ մանրամասն և հասկացնելով մեկնություն տա, թե ի՞նչ է նշանակում այս արթուն պահապանությունը, որոնք ամեն գիշեր հալումաշ են անում մեր թագավորի ամեն հպատակներուն: Ինչի՞ են այստեղ ամեն օր այսքան ումբադործիքներ ձուլում, և տերության սահմանն դուրս տեղեկումը, զինույց և պատերազմի պատրաստության սարեր են առնում փողով: Ինչի՞ համար են նավատեղիներումը այս գործավորաց դունդերը աշխատում, որ տոն օրերն էլ հանգիստ չունին,

ինչպես լուր օրերը: Ինչո՞ւ համար է գերովայր վազվզիլը և շտապելը, որոց շնորհօք ցերեկվա աշխատությունը գիշերն էլ է շարունակվում: Ո՞վ է կարող ինձ հասկացնել, թե այս ի՞նչ պատրաստություն է:

Ովրատիոս—Ես քեզ բացահայտեմ, թեպետ և միայն այս տեղերումը ման եկող համբավների զորությամբ...: Ձեզ հայտնի է, որ մեր առաջվա թագավորին, որո ուրվականը մենք տեսանք այս տեղումը, նորվեգացի Ֆորտինբրասը մենամարտ էր հրավիրել: Այս հրավերի շարժառիթը՝ էր նորվեգացու շար նախանձը ու անչափ հպարտությունը: Մենամարտի ժամանակը քաջարի Համլեթը (որ ամեն կենդանյաց բերնեն վկայված էր քաջարի), խողխողեց յուր ախոյանին: Այլ մենամարտի օրենքին համաձայն դաշնատրության զորության համեմատ, որ վավերացած էր ձեռնադրությամբ և կնքով երկու դիմամարտից էլ, Ֆորտինբրասի մահվամբ, նորա կալվածները հաղթողին պիտի հասնեին: Մեր թագավորն էլ, նույնպես, մեկ պայման էր յուր ձեռագրով հաստատել, որ եթե ինքը սպանվի, Դանիայի տերութենեն պիտի հասներ Ֆորտինբրասին յուր կալվածներուն հավասարաչափ երկիր: Այս երկուստեք պայմանատրության զորությամբ հաղթվածի ժառանգությունը պիտի իրավամբ հասներ Համլեթին (և հասավ): Այլ Ֆորտինբրասի դեռավորց ժառանգը մրկածուի հանդգնությամբ եռալով, անհմուտ լինելով ախպե՛զ գործերուն, հրավիրել է ամեն կողմերից դեպի նորվեգիայի սահմանը անվեհեր քաջարիներու բազմություն, որոնք որ ավուր պարենի համար պատրաստ են ամեն հանդուգն փորձերու օգնություն անել, և այժմ, ինչպես որ իմացում են տալիս մեր թագավորին, դիտավորություն ունի սպառազինյալ ձեռքով և բռնությամբ, խլել այն ամեն երկիրները, ինչ որ յուր հայրը կորցրել է: Հորե՛ս, իմ կարծիքով, հապճեպ պատրաստության, սաստկապինդ պահպանության և վրդովախառն գործունեության զլխավոր պատճառը, որ մենք տեսնելու մեջ ամենքս այսքան հայտնի նշմարում ենք:

Բեռնարդոս—Ես կարծում եմ, որ քու կարծիքդ սխալ չեն և այս հանգամանքներից էլ հայտնի երևում է թե ի՞նչ պատճառով է, որ մենք այստեղ պահպանների առջևումը տեսնում ենք այն մարդու սպառազինված և վեհափառ սովերի երևույթը, որն որ էր և է պատճառ այն պատերազմի:

Ուրախութիւն—Ճշմարտութիւն խոստովանիմ, այս ուրվականը որպէս թէ մեկ
 ամապահատ է ընկած խելքի աչքումը, որ նորա սրբարիւր տեսութիւնը
 շլացնէ։ Հոսմա փառավորութեան և մեծութեան ժամանակը՝ Հուլիո-
 սի կործանիլից քիչ առաջ բացվում էին զերեզմանները, և բու-
 չաներում ման էին դալիս մեռելները թաղման պատանքներով, և
 որոտարիւր աղաղակներով բոլոր քաղաքացիներուն վախեցնում էին։
 Երկինքումը աստղերը իրանց սովորական ընթացքի ժամանակը,
 իրանց ետեւն հրեղեն տուտեր էին թողնում և արշուճախառն անձրե
 իր դալիս ամպերից։ Արեգակնայն վրա նշանները կորուստ էին սպառ-
 նում, և ցողապին լուսատուն կեսգիշերի՝ նկատունի տերութեան իշ-
 խողը, աշնպէս ահեղ էր խավարում, որ կարելի էր կարծել թէ հա-
 սել է աշխարհի վերջանալու ժամը... Հորեւ այժմ էլ նույն նշաններն
 են կրկնվում, դառնակսկիծ անցքերու և գործերու հառաջընթաց և
 օրհասի նախապաշար, մեծ-մեծ թշուառութիւնների սկիզբն մշուս
 անգամ հայնավեցան, որն որ երկինքը ու երկիրը ցույց են տալիս
 մեզ, ուրիշ աշխարհներումը առաջվա ժամանակները մեր քա-
 ղաքակցաց աչքին և... (ստվերը երևում է ձախ կողմից) բայց սո՛ւս.
 կրկին երեւցավ սարսափելի տեսիլը. թող նա ինձ կայծակնահա-
 կործանէ, այլևս պիտի նրան հարցնեմ. (դեպի ստվերը)—Ո՞վ երե-
 վույթ, կաց, և եթէ դու ձայն ունիս և կարող ես ձայն հանել, պա-
 տասխան տուր. կարելի է թէ մեկ բարի գործ կարող է քեզ օգնել և
 բո փրկութեան համար քեզ մեկ օգուտ տալ. տո՛ւր ինձ պատասխան,
 եթէ գիտես, որ Գանիային մեկ մեծ անհայտ թշուառութիւն դարա-
 նակալութիւն է անում, եթէ հնար կա նրան առաջվանից իմանալ և
 չարից աղատվիլ, տո՛ւր ինձ պատասխան։ Կամ եթէ դու կենդանու-
 թեանդ ժամանակը հոգումը թաղած ունիս անիրավութեամբ վաս-
 տակած գանձ, կամ ինչպէս որ ռամկաց հավատքը ասում է՝ եթէ
 դու էլ ուրիշ ոգիներու նման ես աշխարհումը թափառում, տո՛ւր ինձ
 պատասխան (լսվում է հավախոսը)։

Կա՛ց ու պատասխան տուր։ Ես պահանջում եմ. բռնի՛ր գորան, Մար-
 կելլոս։

Մարկելլ.— Գեղարդո՞ւլ զարնեմ ուրեմն։

Ուրախ.— Զա՛րկ գեղարդով, երբ որ այնպէս չէ ուղում կանգնիլ։

Բեռնար.— Այստե՛ղ եկե՛ք։

Ուրախ.— Այստե՛ղ եկե՛ք։ (Ստվերը աներևութանում է)։

Մարկելլ.— Իդուր այսպէս արիւնք. հորեւ անհետ կորավ։ Ինչպէս քառացի՞

էր նորա կերպարանքը: Մենք տարստեպ միտք արինք բռնություն գործածել: Նա օդի նման անխոց, անվնաս է, և մեր թույլ զնդարդի հարվածները միայն տկար բարկութեան ծիծաղաշարժ ձիգն է: Բեռնար.— Գիտես թե ուզում էր պատասխան տալ, մեկ էլ տեսնես որ, արաղակի ձայնը լսվեցավ:

Ուրաւ.— Այն ձայնիցը նա այնպես դողաց, ինչպես որ անակնկալ բռնելի հանցավորը: Ես շատ անգամ եմ լսել, որ ագլարը արշաւուսի փողահարն է, յուր աղղու և բարձրաձայն աղաղակով զարթեցնում է տունջյան լուսատվին, և այս միջոցին այսերը, որ թափառական ման են գալիս ծովի ու ցամաքի վրա, կրակի մեջ կամ օդումը, շտապում են շուտով իրանց տներություն քաշվիլ, և այն ամենը, ինչ որ այսօր մեզ պատահեցավ մեզ համոզում են, որ այս բոլորն էլ ճշմարիտ են:

Մարկել.— Հա՛ առաջին նվագին, երբ որ լսվեցավ կանչածը, ական թոթափիլ, նա աներևութ եղավ: Ուրիշները ասում են, թե ծննդյան տոնից մեկ քանի գիշեր առաջ, ագլարը անդադար կանչում է, այն ժամանակներումը այսերը չեն համարձակվում դուրս երևիլ, և այն գիշերներու աղղեցությունը առողջարար է, երախտապարգև է, և մեկ հատ աստղ էլ այն ժամանակներումը չէ ունենում մարդու վրա վատ աղղեցություն: Կախարդությունը կորցնում է յուր զորությունը, իսկ վհուկները կորցնում են իրանց կարողությունը. այսքան բարեբար չ' լինում այն ժամանակը:

Ուրատիս.— Ես էլ լսել եմ նույնպես, և քիչ էլ հավատում եմ: Բայց հորեն առավտոր արդեն ծիրանի տառատակով դուրս է գալիս բլուրի ետեկից լուսաբացի ցողի մեջեն...: Վերջացնենք մեր պահպանությունը և զնանք Համլեթի մոտ: Իմ կարծիքով, մենք պարտավոր ենք պատմել նրան այն ամենը, ինչ որ այս գիշեր տեսանք: Իմ արևս վկա, այն երևութ-ոգին մենակ մեզ համար էր անլեզու, իսկ նորա հետ, անշուշտ կրիստսի: Ի՞նչ եք ասում, հավա՛ն եք այս խորհուրդին, որն որ մեզ վրա հարկ է դնում թե պարտավորությունը, և թե այն սերը, ինչ որ մենք ունինք դեպ առ Համլեթ:

Մարկելլոս.— Երթանք նորա մոտ շուտով: Ես գիտեմ թե նորան ի՞նչտեղ ենք կարող գտնել, և առանձին խոսիլ նորա հետ՝ արձակ-համար-ձակ:

Քաղաքների ապարանքի մեջ խորհրդարանի դանիքը

Մեջտեղումը երկու դա՛ր բարձրավանդակի վրա. աջակողմը մեկ աստիճան ցած դա՛հեն՝ աթոռ, ձախակողմը, երկու աստիճան ցած՝ արքունի տառնադպրի սեղանակը. դա՛հի երկու կողմերումը խորհրդակիցներու տեղերը կիսարուրդակ (պայտածի) կալմած: Ներս են մտնում թաղավորը, թաղուհին, Համլեթը, Պոլոնիոսը, արքունի տառնադպիրը, խորհրդակիցները, Լաերտոսը, Վոլտիմանդը և Կոռնելիոսը: Թաղավորը և թաղուհին նստում են դահուլքումը: Խորհրդակիցները իրանց տեղերումը (Պոլոնիոսը դա՛հի մոտ առաջին տեղումը, արքունի տառնադպրի մոտ): Համլեթը առաջ կանգնում է մեծ աթոռի մոտ, հետո, երբ որ թաղավորը նշմարը է անում, նստում է: Լաերտոս, Վոլտիմանդ և Կոռնելիոս: Կանգնում են նախատեսարանումը դեպի աջակողմ:

Մեծին Համլեթի թաղավորի, մեր թանկագին եղբոր մահվան հիշատակը դեռ այնքան նոր է ամենուս մտքումը, որ կարծեմ թե ավելի պատշաճ կը լիներ մեզ սղավոր նստիլը, և մեր բոլոր տերության արամության թուխեր հագնիլը. բայց ... խոհականության իշխանությունը մեր մեջումը զորացավ և հաղթեց սրտի փղծուկներին, այն արամության ուժերը տկարացան, և այժմ դեռևս միշտ նրան մտքերիս մեջ ունենալով, մե՛ղ էլ չենք մոռանում և.. և հորեւ անկատար ուրախություն կրելով, մեր սրտերի մեջ խառնելով ժպիտը դառնակսկիծ արտասուքների հետ, զվարճությունը՝ թախծանոց հետ, և հարսանյաց երգերը հուղարկավորության զանգերի ձայնի հետ, և դնելով հավասար բաժին սուգի և խնդության համար, մենք քնտրեցինք մեզ համար լծակից նրան, որն որ առաջ մեզ քույր էր, և մյուս անգամ բազմեցուցինք նրան մեզ հետ միասին այս հղբը և քաջամարտիկ թաղավորության աթոռը: Այս գործի մեջ մենք վարվեցանք այն խորհուրդների զորությամը, որն որ ազատաբար տրվեցան մեզ՝ ձեր իմաստութենեն:

Այժմ անց կենանք դեպի Ֆորտինբրասի խլրտյունը ... նա երեի որ մեզ շատ ցած է դին դնում, և կարծում է թե մեր ամենասիրելի եղբոր մահը բարուքանդ է արել թաղավորության ամեն զորությունը, և դուրս է հրավիրել անիշխանություն և շփոթներ ... և անձնախաբ հուսերով պատրված նա մեզմեն պահանջում է կամակոր ժպահությամը ետ դարձնել այն երկիրները, որն որ մեր քաջ եղբայրը ձեռք է գցել: Ահա՛ ամենը, ինչ

որ մենք կամենում էինք ձեզ ասել: Այժմ մենք պիտի դառնանք դեպի այճառարկան, ինչի համար որ այս ժողովը հրավիրել ենք մեզ մոտ:

(Առնում է արքունական ատենադպրի ձեռքեն թուղթը):

Այս նամակով մենք իմաց ենք տալիս Նորվեգիո իշխանին՝ Ֆորտինբրասի հարազատ հորեղբորը, այն խելագարի դիտավորութունը: Այն զանազան ծնունդի (հորեղբայրը) համ ուժե ընկած է, համ հիվանդոտ և մահիճներեն չէ վեր կենում: Չը կարծեմ թե նա իմանում լինի Ֆորտինբրասի որոգայթները: Նամակի մեջ մենք խնդրում ենք, որ նա խափանեյուր եղբորորդվո խորհուրդը, ավելի այն պատճառով, որ Ֆորտինբրասը յուր զորաժողովը անում է նորա տերության մեջ: Մենք հանձնում ենք ձեզ, Կոռունելիոս ու Վոլտիմանդ (Կոռունելիոս ու Վոլտիմանդ մոտ են գալիս դեպի գահը և ծունկ են չոքում). տանել մեր ողջունագիրը Նորվեգիո միապետին... Հարկավոր ենք համարում ձեր այն թագավորի հետ բանադնացության իշխանությունը սորա մեջ դրած հրահանգով փոքր-ինչ (տալիս է նոցա թղթերը): Ուրեմն աճապարեցեք և արագ կատարմամբ ցույց տվեք ձեր դեպ առ մեզ մտերմությունը, ջերմ եռանդը:

Կոռունելիոս—Ինչպես որ միշտ, նույնպես և այս նվագին:

Վալտիմ.—Անխտոր ցույց կուտանք մեր մեծի միապետին մեր հնազանդության պարտավորությունը: (Թուղթը առնում են, վեր են կենում):

Թագավոր—Ես երկբայութուն չունիմ: Երթաք բարով: (Վոլտիմանդ և Կոռունելիոս գնում են): Այժմ, կանրտ, քեզ հետ խոսինք: (Կանրտ գալիս է գահից մոտ): Մենք լսել ենք, որ դու մեկ խնդիր ունիս, ասա՛, ի՛նչ է քո աղերսը. մեր հազվագյուտ կանրտ: Ես վստահ եմ ու հաստատ համոզված, որ լայդ խնդիրը պիտի լինի անշուշտ հա՛մ խելքով մտածած, հա՛մ էլ հնարավոր: Իսկ Դանիայի միապետի մոտ խելք խնդիր դու ի դուր չես ուղի: Ի՛նչ ես կարող դու ցանկալ, կանրտ, որ քո խնդիրեդ առաջ քեզ շառաջարկեն: Խելքը սըրտի հետ, և շրթունքը՝ ձեռքի հետ այնքան մոտիկ չեն, որքան որ Դանիայի գահը քո հոր հետ: Ի՛նչ է քո բաղձանքը:

Կանրտ—Մեծ թագավոր, խնդրում եմ հրաման, որ մյուս անգամ վերադառնամ դեպի Ֆրանսիա, ես շտապեցի դեպի Դանիա հասնիլ Ձեր թագադրության հանդեսին: Այլ այս քաղցրիկ պարտքս հատուցանելից ետ՝ ճշմարիտը խոստովանիմ, ես մտքով ու բոլոր սրտով կրկին դեպի Ֆրանսիա եմ ձգտում, և աղաչում եմ թագավորին, որ ինձ հրաման շնորհե հրաժարական ողջույն տալ նրան:

Թագավոր—Շատ լավ է: Բայց Պոլոնիոսը հոժա՛ր է քո երթալուն:

Պոլսնիս—(վեր կենալով տեղեն) Թագավոր, նա չուր խնդիրներով ինձ
այնքան ձանձրացուլց, որ ես էլ այնուհետեւ կամա-ակամա համա-
ձայնեցաւ Թող երթա, ես էլ չեմ խափանում, և նորա հետ միասին
քեզ էլ աղաչում եմ քերմեռանդութեամբ, որ նրան շուտով թողեք
երթալ Ֆրանսիա:

Թագավոր—Դու կորուզ ես, կահրտ, այս իսկ ժամումը, թե կամենաս, ճան-
փա բնկնիլ քեզ տալիս ենք ազատութիւն, քո անձն և քո ժամա-
նակը այնպես տնօրինել, ինչպէս որ կամես:

Այժմ դեպ առ քեզ ենք դառնում, Համլետ՝ մեր եղբորորդի:

Համլետ—(Ոտքի է կանգնում և մեկտախ) Դու ո՛չ այնքան ճիշտ սահմա-
նեցիր ազգութիւնդ:

Թագավոր—Մի՞թե մտահուլց տրամութեան ամպերը չգաղթեցան դեռ
քո ոգին մթաքնեկն:

Համլետ—Ինչպէս է կարելի, Թագավոր ... ո՛չ ապաքեն, ես այսքան մոտ
եմ արեգակին:

Թագունի—Իմ թանկագին Համլետ. թո՛ղ այդ տրամութեան հագուստը և
բարեկամութեան հալեցված ձգիր Թագավորի վրա: Ինչի՞ ես ամեն
ժամանակ աչքերդ դեպի վայր կորացնում, որպէս թե դետնի վրա
պտտում ես քո վեհանձն հոր հետքը: Դու խմանում ես, որ ճակո-
տողիրը դրած ունի այս կյանքումը ամենալին բանի վերջ, ու այս
աշխարհը միայն մեկ ոտնախիտ է դեպի մյուս՝ պատվական աշ-
խարհ: Այսպէս է հասարակաց բաժինը:

Համլետ—Ճշմարիտ եք դատում, թագուհի, այսպէս է հասարակաց բա-
ժինը:

Թագունի—Եթե այս այսպէս է, ապա ի՞նչ պատճառով է քեզ միայն այս
բաժինը երևում այսքան օտարոտի:

Համլետ—Ի՞նչ է երևում: Ո՛չ, ո՛չ: Ինձ համատացեք, թագուհի, որ նա իս-
կապէս օտարոտի է: Ինձ համար չկան կարծիքներ, մտքեր: Ա՛խ,
մայրի՛կ, ո՛չ այս սե վերարկուն, ո՛չ այս պաշտոնական և հանդիսա-
վոր սե պերճ համահանդերձը սղավորութեան, ո՛չ արտասովաց
հորդութիւնը, ո՛չ հառաչանքները, ո՛չ վերջին աստիճան տրամու-
թեամբ խաթարած դեմքերը, ո՛չ, ոչի՛նչ այն ամեն արտաքին նշան-
ներէից, որոնցմով որ տառապանքը նկարագրվում են, չեն կարող
արտահայտել իմ ամեն տրամութիւնը: Այս ամեն նշանները կա-
րող են լինել կեղծավորութիւն, այս ամենը՝ այնպիսի դեր են, որն
որ դժար չէ խաղարկիլ, այս ամենը արտաքին կճեպ է... Այլ իմ

մեջս, հորես, այստեղ (ձեռքը դնում է սրտին) մեկ այնպես բան է խլրտում, որն որ նշաններով հավիտյան շնմ կարող ձեզ հասկացնել:

Թագավոր—Մենք կարող ենք միայն գովել, իմ բարեսիրտ Համլետ, քո որդիական սերը և տրտմությունը. այլ միտքդ բեր միայն, որ եղել է այնպես ժամանակ էլ, որ քո հայրն էլ յուր հորն է կորցրել: Յուր կարգով նորա հայրն էլ սգացել է յուր հոր կորուստը: Ես գիտեմ, որ կենդանի մնացողների համար մեռնողների հետևիցը տրտմիլը մեկ պարտք է միշտ նվիրական, որդիական սիրո պարտավորություն: Այլ միշտ տխրության մեջ կամակորիլը՝ չափազանց գործ է: Այս կամապաշտությունը վշտագնեցնում է երկնից սրբությունը: Այնպիսի տրտմությունը՝ վհատություն է, և երկնից կամաց հակառակ, անաստված և չար ապստամբություն: Նա ապացույց է թույլ հոգվո և չփթթած խելաց: Մահն մեկ անփախուստ բաժին է ամենեցուն, և այնքան ստեպ է կրկնվում աշխարքի մեջ, որ դառել է մեկ պարզ ամենօրվան բանուգործ. ուրեմն կարելի՞ է այնպես մեր անսահման տերության մեջ՝ այդքան մոտիկ թողուլ նրան դեպի մեր սիրտը: Ամաշիր, Համլետ, դու երկինքին ես վշտացնում, դու մեռելներուն և բնության ես տրտմեցնում, որոց մեջ մահն օրենք է այն օրից, երբ որ առաջին մարդը աշխարքի երեսին վախճանեցավ, մինչև այսօրվան վախճանող ետին մեռելը չէ կտրվել, նորա դեպի մեզ խրատը, թե այսպես պիտի լինի: Քեզ աղաչում եմ, Համլետ, դե՛ն զգիր քեզանից այդ անպտուղ թախիծը, և մեր մեջ գտիր քեզ համար երկրորդ հայր: Իսկ ինչ որ մեր կողմանե է պատշաճ, մենք կամենում ենք, որ ամենքը իմանան, թե դու քան զամենեսին ավելի մերձավոր ես գահին, և թե այն ամեն սերը, ինչ որ հայրը կարող է ունենալ դեպ առ թանկագին որդին, մենք ունենք դեպ առ քեզ: Իսկ այն մասին, որ դու մտադիր ես մյուս անգամ վերադառնալ դեպի հեռավոր Վիթենբերգ, քո նախկին զբաղմանց մոտ, ասում ենք, որ այդ մեր ցանկության ընդդեմ է, և քեզ աղաչում ենք, որ մեղ հետ միասին կենաս, լինես ուրախություն արքայական աչքերուս, զուլխ արքունյաց, և մեղ համար թանկագին եղբորորդի և որդի:

Թագունի—Գորովագութ Համլետ: Մի՞թե զուր պիտի անց կենա քո մոր աղաչանքը: Քեզ պաղատում եմ, մնացի՛ր մեզ մոտ, և մեղնից մի՛ հեռանար դեպի Վիթենբերգ:

Համլետ—Ես հնազանդել եմ և միշտ, և ամեն բանի մեջ ես կհնազանդվիմ ձեզ:

Քաղալոր—Շատ լավ է: Հորեւ մեր սրտի հաճոյապարտություն, մնացի՛ր մեզ մօտ, Դանիայի մեջ դադիր երկրորդ թաղալոր: (Վեր է կենում և թաղուհուն չուր ձեռքն է տալիս): Երթանք, թաղուհի: Համլեթ աշուոր մեզ անպատմելի ուրախությունով ուրախացուցց, չուր հոժարամիտ հլությամբ: Այս օրը Դանիայի միապետին արժանապես կնքելու ամեն մեկ գինու բաժակը, որն որ նա պիտի խմե, թող երկինք և երկիր իմանան, հարչուր անգամ ամբողջօրեայ որոտմամբ, թող երկինքը կրկնե երկրալոր որոտմանց արձագանքը, և տանք հեռագուցն ... երթանք: (Ամենեքանն դուրս եկան, բացի Համլեթէն):

Համլեթ—(Մենակ): Ա՛խ, եթէ իմ այսքան ամուր մարմինը կարողանար հալվիլ և ցող դառնալ, Ա՛խ, եթէ նախահալիտյանը անձնասպանության դեմ արդելք դրած շիւներու Աստված, աստված, ինչպե՛ս տժգուցն և արհամարհ, ինչպե՛ս անտրի են երևում ինձ կշանքի վաշկելություններու: Ինչպե՛ս խղճալի է այս աշխարհը: Մոլախոտայլ հին պարտեղ, ուր որ միայն ցախ ու անպիտան խոտեր են բսնում: Կարելի՞ էր, որ մինչև այս տեղ հասներ... Դեռևս երկու ամիս է, որ մեռավ: Ի՞նչ եմ ասում, դեռևս երկու ամիս էլ չկա: Այնպիսի մեծ միապետ, որ այժմյան թաղալորի հետ համեմատելով, է՛ր այժամարդի առջեր շիփերիտն, որ այնքան քնքույշ սիրով սիրում էր չուր զուգակցին ... քամիին արգելումն էր տալիս, որ նորա երեսին անզգուշարար շփշե ... երկի՛նք, գետի՛ն, ա՛խ, ինչի՛ եմ էս միտքս բերում. նա էլ նրան ի՞նչպես սերտ էր մոտենում, որպես թե կերպարը ավելի ուժգին էր քաղցր զորացնում... Եվ ի՞նչ: Հագիվ թե անցավ մեկ ամիս միայն...: Հերիք է ... էլ չհիշե՛նք, միտքերս չըրերե՛նք: Անհաստատություն, քո անունը կին է: Դեռ մեկ ամիս: Դեռ այն ոտնամանները մաշված չեն, որոնցմով որ դնում էր նա իմ հորս դադաղի ետեկն՝ արտասուքի մեջ՝ Նիորիայի նման...: Եվ այս կիներ...: Ո՛վ երկի՛նք: Անմիտ դադանը այսքան շուտ չէր մոռանար չուր կսկիծը: Իսկ սա, արդեն ամուսնացած է. իմ հորեղբոր կիներն է. չուր մեռած մարդու եղբորը, որ այնքան նման է նրան, որքան որ ես նման եմ Հերբուլեսին: Մեկ ամսումը: Ախր՛ր, խո դեռ չեն կորսցված նորա արտոսաթոր աչքերու մեջ սար դրած (կեղծուպատիր) արտասուքի հետքը, նա արդեն պակկված է: Օրինադա՛նց, շտա՛պ: Այսպես հոժարությամբ և մտադլուր ճեպել դեպի ազգապղծության անկողի՛նք. լավ բան չէ. այստեղ հաջողված չի լինիր: Փշովի՛ր, սիրտ: Ինձ մնում է լռել:

Ներս են մտնում Ուլրատիոս, Բեռնարդոս և Մարկելլոս:

Ուրախոս — Արքայորդիս իմ, խոնարհադեմ ձեզ ողջուն:

Համլեք — Ա՛, բա՛: Հորես անակնունելի դիտված, դու ինձ ուրախացուցիր, բարեկամ, ես խո՞ չեմ սխալվում, դու Ուրախո՞սն ես:

Ուրախոս — Զջմարիտ եք ասում, արքայորդի, ես Ուրախոսն եմ, և միևնույն ժամանակումը Ձեր ջերմեռանդ ծառա՝ իբր բոլոր կյանքիս մեջ:

Համլեք — Ուրախոս. դու ուզում ես ասել բարեկամ: Քեզ հետ փոխենք ծառա անունը...:

Այլ ... Աստվա՛ծ կսիրես, դու ինչի՞ համար թողիր Վիթենբերգը (դեպի Մարկելլոս) Մարկելլո՛ս:

Մարկելլ. — Արքայորդի...:

Համլեք — Ես ուրախ եմ, որ քեզ տեսնում եմ այստեղ, առո՞ղջ ես: (Դեպի Ուրախոս)

Բայց ասա ինձ ստուգապես ... դու ինչի՞ թողիր Վիթենբերգը:

Ուրախոս — Մուլությունը հաղթեց, արքայորդի:

Համլեք — Դատարկ բաներ են. ինչե՞ր ես խոսում. ես չեմ հավատում. քու թշնամուն էլ չէի թույլ տար ես այդպիսի պատճառներ մեջ բերել, դու ինձ հավատա, որ չես կարող ստիպել այդքան հապճեպ իմ կարծիքը փոխել քեզ համար: Դու ծուլ չես, ես իմանում եմ, այլ քեզ ո՞ր սատանան բերեց այստեղ մեզ մոտ էլսինոր: Թե հաճո է քեզ, մենք այստեղ քեզ կսովորեցնենք հարբածություն:

Ուրախոս — Ես քո հոր թաղումին հասնելուն շտապեցա:

Համլեք — Իմ հի՛ն բարեկամ, խնդրում եմ որ այդպես խստությամբ ծաղր չանես, դու շտապել ես որ իմ մոր հարսանիքին հասնիս:

Ուրախոս — Շուտով մեկը մեկելի տեղը բռնեց...:

Համլեք — Այստեղ տեսնո՞ւմ ես կար հաշիվ, տնտեսական հաշիվ: Հուդարկալորութենեն մնացել էին ուտելիք-խմելիք և այնպես շուտով հարսանյաց խնջուլքից համար պետք բերին, որ չհոտին...: Ինձ ավելի դուրսին էր տեսնել, որ իմ ոխերիմ թշնամին ընկել է դրախտի մեջ, քան թե այն սարսափելի օրը անց կացնել անդորր: Իմ հայրս գիտե թե ես նրան այժմ չլ եմ տեսնում...:

Ուրախոս — Ո՞ր տեղումն ես տեսնում, արքայորդի:

Համլեք — Իմ հոգվույս աչքերի մեջ:

Ուրախոս — Ես էլ եմ տեսել նրան, նա մեծ թագավոր էր:

Համլեք — Նա մարդ էր, և այնպես մարդ աշխարհումը էլ չի լինիր:

Ուրախոս — Արքայորդի... կարծեմ որ ես այս գիշեր նրան տեսա:

Համլեր — Տեսա՞ր. ո՞ւմը տեսար:

Ովրաախ. — Հանդուցյալ Համլեթ թագավորին:

Համլեր — Գու տեսար հանդուցյալ հո՞րս, ե՞րբ և ի՞նչ տեղ:

Ովրաախ. — Ազատւում եմ ձեզ, արքայորդի, մե քիչ հանգստացե՛ք և անկաջ դրե՛ք, լսեցե՛ք իմ պատմութիւնս, որս վիճաները, ա՛հա, այստեղ են:

Համլեր — Երկի՞նք. թե՛ կսիրես շուտով պատմի՛ր, ես անկաջ եմ դնում:

Ովրաախոս — Շարունակ երկու գիշեր հետզհետե մութ և անդորր ժամանակը, երբ որ սոքա՝ Մարկելլոսը ու Բեռնարդոսը պահապան էին կանգնած, տե՛ս թե ի՞նչ անպատմելի դիպված է պատահել երկուսին էլ: Երեւել է նրանց մեկ տեսիլ՝ կերպարանքով նման Ձեր հորը, պահանքու և պատերազմական փառապաններու մեջ: Տեսիլը անց է կացել նոցա մոտեն հանդարտ և մեծափառ քայլելով ... երեք անգամ կրկնվել է, և այն երևույթը այնքան մոտից է անցկացել, որ նորա հետախորութիւնը բան զնորա ձեռի ցուպը ավելի երկար եղած չէ: Այլ սոքա վախեցած լինելով չեն համարձակվել խոսիլ երևույթի հետ: Այս նորանշան անցքը, սոքա դողալով, ինձ պատմեցին և խնդրեցին, որ շատ ծածուկ պահեմ: Մյուս օրը ես էլ զնացի սոցա հետ պահապան կանգնելու: Որպես թե սոցա խոսքը հաստատելու համար նշանակած ժամումը երեկեցավ ինձ էլ այնպես, որ սոքա էին պատմել: Ես նորա մեջ իսկույն ճանաչեցի մեր հանդուցյալ թագավորին. և իմ երկու ձեռքս այնքան նման չեն մեկզմեկու, ինչպես որ այն տեսիլը նման էր հանդուցյալ թագավորին:

Համլեր — Այդ ինչ տեղ պատահեցավ:

Մարկելլոս — Հողարկուր բարձրավանդակ ճեմելիքի վրա, ինչտեղ որ մենք պահապան ենք կանգնում, արքայորդի:

Համլեր — Գուք նորա հետ խոսեցա՞ք էլ:

Ովրաախոս — Խոսեցանք, արքայորդի, բայց նա մեզ պատասխան չբերվեց: Մեկ վայրկյանի չափ, ինձ այնպես թվեցավ, թե նա գլուխը վեր արավ, և ինչպես երևում էր, ուզում էր խոսիլ, բայց նույն վայրկյանումը ազլարը կանչեց: Հավախոսը որ լռեց, սովորը հաիշճեպ անբերելով եղավ:

Համլեր — Հա՛, դարմանք բան է:

Ովրաախոս — Արքայորդի, ես պատրաստ եմ ձեզ երդմամբ հավատացնել, որ մեր պատմածը ճշմարիտ է. և մենք մեզ համար պարտք համարեցանք ձեզ ամեն ինչ պատմել:

Համլեր — Հա՛, դարմանք է, շա՛տ դարմանք, այստեղ երեւի շատ ոչինչ բան չկա..., դուք այս գիշե՞ր էլ պահապան կկանգնիք:

Ամենք — Հրամեկ ես, թագավոր:

Համլեք — Նա սպառազինված էր:

Ամենք — Հրամեկ ես, թագավոր, դրահներով էր:

Համլեք — Բոլոր սպառազինությունը ունե՞ր:

Ամենք — Հրամեկ ես, ունեք:

Համլեք — Դուք երեսը տեսա՞ք:

Ովրաւտ. — Հրամեկ ես, թագավոր, երեսի պահպանակը վերացրած էր:

Համլեք — Ինչպե՞ս երեւցավ ձեզ, ահընկե՞ց էր կերպարանքով:

Ովրաւտիս — Մանավանդ տրտում էր:

Համլեք — Ինչպե՞ս էր երևում երեսը, տեղո՞ւյն, թե շառագնած:

Ովրաւտ. — Չէ՛, շա՛տ դալկահար:

Համլեք — Նորա աչքերը ձեր վրա հա՞ռած էին այն միջոցին:

Ովրաւտ. — Մեր վրա էին:

Համլեք — Ո՛հ, թե որքան կուզեի ես, որ ձեզ մոտ լինեի այն միջոցին:

Ովրաւտիս — Դուք անշուշտ պիտի դարմանայիք:

Համլեք — Էլ ի՞նչ ասել կուզեիր... Երկա՞ր մնաց ձեր մոտ:

Ովրաւտիս — Չէ՛, որքան ժամանակ որ պետք է, մինչև համբոս մեկից

մինչև հարյուրը, առանց շտապելու:

Բեռնարդոս և Մարկելլոս — Չէ, ավելի՛, ավելի՛:

Ովրաւտ. — Գոնե, ո՛չ իմ ժամանակումս:

Համլեք — Ինչպե՞ս էր այն սովերի մորուքը. սպիտա՞կ էր:

Ովրաւտ. — Ալիխան, ինչպես որ կենդանություն ժամանակն էլ էր:

Համլեք — Ես այս գիշեր ձեզ հետ միասին կկանգնեմ պահպան: Կա-
րելի է թե տեսիլը մյուս անգամ վերագոռնա:

Ովրաւտիս — Վստահ եմ, որ պիտի վերագոռնա:

Համլեք — Եթե ինձ երևի իմ հորս կերպարանքով, ես անշուշտ կսկսեմ
հետը խոսակցություն անել, թեև դժոխքը բաց անե յուր սոսկալի
կլապեր, և ինձ հրամայե որ սուս կենամ: Ես ձեզ խնդրում եմ, որով-
հետև մինչև այժմ դուք այս երեւոյթը ծածուկ եք պահել, այսուհետև
էլ ծածուկ մնա, և եթե այս գիշեր մեկ բան պատահի... դուք որքան
կամիք մտածեցեք, բայց բնավ մի խոսիք: Ես ետո ձեր օրվարձը կը-
հատուցանեմ: Ուրեմն գնացեք բարյավ: Երբ որ կես գիշերը մոտ
հասնի, ես կուզամ հողաբլուր ճամելիքը՝ ձեզ մոտ: Երթանք բարով:

Ամենք — Չեզ մեր հարգությունը:

Համլեք — Հարգություն չեմ պահանջում, ինձ սովեք ձեր բարեկամու-
թյունը, և նորա փոխարեն էլ իմ բարեկամությունս պահանջեցեք:
(Ովրաւտիս, Մարկելլոս և Բեռնարդոս գնացին):

Համլեր—(Մենակ)։ Իմ հորս սպառազինված ուրվակա՞նք։ Այստեղ թաք
է կացած մեկ աշնպես բան, որ ավելի լավ չէ։ Եվ իմ հոգվույս մեջ
նոր ի նորս միջամուխ սպրանցավ կասկած։ Ո՞հ, երանի՜ թե շուտ
հասներ գիշերը։ Այլ մինչև այն ժամանակ, դու հանդարտ սպասիր,
անձն իմ։ Ոճիրը չէ կարելի ծածկել, թեև բոլոր երկիրը փորեն և
հողը նորա վերա կուտես։ (Հեռանում է)։

ՏԵՍԱԲԱՆ ԵՐՐՈՐԳ

Պոլոնիոսի տաճ մեջ մեկ սենյակ։
Ներս ևճ մտնում Լաերտ և Ուփելիա։

Լաերտ—Արդեն իմ ճանապարհի ամեն աղբը նախումն է։

Մնաս բարով, բույրիկ, մի՛ ծուլանար ինձ դիր գրելից։

Ուփելիա—Ո՛, կարո՞ղ ես դու երկմտություն ունենալ, Լաերտ։

Լաերտ—Այլ Համլերթի մասին, և նորա բեզ սիրելու կողմանն, դու ինձ
ականջ դիր, խնայի՛ր, որ նա մեկ վայրկյանական բանաբարշու-
թյուն է, զգայարանաց կողմնադաշտություն, դարնանային մասնու-
շակ, որ թևակտ կանուխ է ծաղկում, բայց կանուխ էլ է թառամում և
թևակտ նորա անուշահոտությունը քաղցր է, բայց՝ դյուրանցուկ է.
նրան հոտ են անում և խսկույն դեն են դրում, և ամեն բան վերջա-
ցավ...։

Ուփելիա — Ինչպե՛ս թե ամեն բան վերջացավ։

Լաերտ—Իհարկե որ, էլ ավելի ոչինչ չկա, հավատա՛ ինձ։ Երբ որ մար-
դը տարբեր հետ միասին դարգանալով փթթում է, ոչ թե միայն նո-
րա մկանունքն են ամրանում, այլ նոցա հետ միասին խելքն էլ, սիր-
տըն էլ են հասունանում։ Կարելի է, թե այժմ բեզ Համլերթ սիրում
էլ է, և չկա նորա հոգու մեջ մեկ սև խորհուրդ, և ոչ մեկ ապօրինի
ցանկություն. բայց այսուամենայնիվ, դու զգուշ կացիր։ Նա շունի
իշխանություն չուր վերա։ Նա յուր ծագման ծառա է։ Նա չէ կարող
յուր սրտի ուզեցած ընկերը ընտրել մեզ նման, որովհետև այն ընտ-
րութենեն պիտի կախված լինի թագավորության երջանկությունը։
Այս պատճառով Համլերթն այս ընտրության մեջ պարտավոր է լինել
ժողովրդյան հնազանդ։ Եվ եթե նա բեզ ի սրտե սիրում էլ որ լինի,
դու խոհականությամբ վարված կլինիս, եթե քու հույսդ նորա սի-
րույն այնպես կպարտավորես, որքան որ կներե հնարավորության

սահմանը, միտքդ բեր, որ նա չէ կարող ոչինչ տրամադրել առանց Դանիայի համաձայնությանը: Այլ այն միջոցումը միտք արա, թե որքան ամոթ ես կարող ձգել քո վերա, եթե որ վստահաբար անկաջ կախես նորա սիրո թռչկոթյամբ լցված խոսքերին, և սիրտդ բոլորովին նրան տաս, և նորա համարձակ փորձերի առջև քո անմեղության դանձարանի դռները բանաս: Անձկալի՜ բարեկամ, քույրի՜կ Ուիելիա, աղաչում եմ քեզ, դժույշ կացիր, սրտիդ թափերը սանձիր և քեզ հեռու պահե նորա ցանկության նետերից ... Հավատա՛, որ անմեղ օրիորդի համար արդեն շատ-շատ է, եթե որ նորա գեղեցկությունը տեսնել լուսինը, ու առաքինությունը չկարծեմ թե կարողանա անձնատուր լինել բամբասանքեն: Շատ անգամ վտանգավոր որդը ուտում է բոլոր գարնանային ծաղկունքը, մինչդեռ նորա բնավ բացված ես չեն, և մանկությունը ավելի շուտ ընկնում է ցանցի մեջ այն ժամանակ, երբ որ նորա ծաղիկը դեռ նոր է շառագոռնում: Ուրեմն մեկ էլ եմ կրկնում, զգույշ եղիր...: Ամեն չար վտանգներու դեմ լավ պաշտպանություն է այն վտանգներեն վախենալը, և երբ մանկությունը շունի այդ անխաբ պաշտպանությունը, նա ինքն իրեն թշնամի է հանդիսանում:

ՎԱՀԱՆ ԹՈՒԹՈՎԵՆՅԻ ԵՐԿՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրապարակում և առաջաբան ԼՅՈՒՍԻ ԱՐԵՂՅԱՆԻ

Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի օրերին, Ռ. Զարյանը, առաջինը լինելով, Շեքսպիրի հայ թարգմանիչների կողքին հիշատակեց և Վ. Թոթովենցի անունը: Շատերի համար դա նորություն էր, որովհետև մեր գրական հասարակայնությունը նրան ճանաչում է որպես գրողի, բայց ոչ թարգմանչի. նրա թարգմանությամբ որևէ գործ չի տպագրվել, բացի «Ռիչարդ Գ-ից» մի հատվածի, որ լույս է տեսել «Խորհրդային արվեստում» 1935 թվականին: Գուցե տարօրինակ թվա, որ նա հենց սկզբից թարգմանության համար ընտրել է ոչ այլ ինչ, քան Շեքսպիրի երկերը: Դա, իհարկե, ունի իր բացատրությունը: Նա իր ամբողջ գիտակցական կյանքում տարվել է Շեքսպիրով: Դեռ ուսանողական տարիներից, երբ սովորում էր Վիսկանսին համալսարանում, ոգևորությամբ կարդացել, ուսումնասիրել է Շեքսպիրի ստեղծագործությունը: Նրա գրադարանում կարելի էր գտնել Շեքսպիրի երկերի ամենատարբեր հրատարակություններ, առանձին երկեր ու ծավալում հատորներ՝ և տա՛րածված, և ունիկալ գրքեր, տարբեր լեզուներով, տարբեր ձևավորումներով, վերջապես ինչ որ կարողացել էր ձեռք բերել: Հայաստան գալուց հետո էլ նա իր «շեքսպիրական» կարողացավ լրացնել վերջին տարիների հրատարակություններով՝ բուկինիստներից և արտասահմանում ապրող իր գրական ընկերներից. այդպես նա ձեռք բերեց Հ. Մասեհյանի թարգմանությունները Վիեննայից, մի հատորում ամբողջական Շեքսպիր՝ մանրամասն